ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 23 >> սեպտեմբերի 2013թվականի N 98 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի համայնքի կարիքների համար անհետաձգելի համարվող տրանսպորտային սարքավորումների (մեկ ջրացան, մեկ ծածկած բեռնատար մեքենաների) ձեռքբերման անհրաժեշտությունից առաջնորդվելով « Գնումների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 20 – րդ հոդվածի 5 – րդ կետով և ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 5 – րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային սարքավորումների (մեկ ջրացան, մեկ ծածկած բեռնատար մեքենաների) անհետաձգելի համարվող գնումները բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու:

2.Թույլատրել անհետաձգելի համարվող գնումները իրականացնել երկրորդային շուկայից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (18) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան_____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան_____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Վ.Շիրինյան_____

Է.Մկրտչյան_____

Ե.Պողոսյան_____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 23

ք.Գյումրի